ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 265-Ա

23 մայիսի 2025 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՆՑԱԾ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՆՕՐԵՆՆԵՐԻ, ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂՆԵՐԻ ԵՎ ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՍԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂՆԵՐԻՆ ԱՊՐԱՆՔԱՆՅՈՒԹԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, 13-րդ հոդվածի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի, 19-րդ հոդվածի դրույթներով

որոշում եմ՝

1. «ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառի Ս. Քոչարյանցի անվան N 1 հիմնական դպրոց», «ՀՀ Գեղարքունիքի մարզի Գանձակի N 2 միջնակարգ դպրոց», «ՀՀ Գեղարքունիքի մարզի Լճափի միջնակարգ դպրոց», «ՀՀ Գեղարքունիքի մարզի Նորատուսի N 1 միջնակարգ դպրոց», «ՀՀ Գեղարքունիքի մարզի Գեղամավանի Ա. Աբրահամյանի անվան միջնակարգ դպրոց», «ՀՀ Գեղարքունիքի մարզի Զովաբերի Ե. Չարենցի անվան միջնակարգ դպրոց», «ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծովագյուղի Մուրացանի անվան միջնակարգ դպրոց», «ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունու Մ. Մելիք-Շահումյանցի անվան N 1 հիմնական դպրոց», «ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունու Ս. Դարբինյանի անվան N 2 հիմնական դպրոց», «ՀՀ Գեղարքունիքի մարզի Լեռնահովիտի Վարուժան Բարեղամյանի անվան հիմնական դպրոց», «ՀՀ Գեղարքունիքի մարզի Լիճքի հիմնական դպրոց», «ՀՀ Գեղարքունիքի մարզի Մադինա գյուղի միջնակարգ դպրոց», «ՀՀ Գեղարքունիքի մարզի Գեղամաբակ գյուղի հիմնական դպրոց», «ՀՀ Գեղարքունիքի մարզի Լուսակունքի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունների Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզային ենթակայության նոր համակարգի անցած պետական

հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրենների, տնօրենների պարտականությունները կատարողների և տնօրենների ժամանակավոր պաշտոնակատարների կողմից վարչատնտեսական մասի համակարգողներին ապրանքանյութական արժեքների հանձնման-ընդունման սահմանված կարգով կազմակերպելու համար ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնաժողովի նախագահ Գևորգ Գևորգյանին՝ ապրանքանյութական արժեքների հանձնման-ընդունման աշխատանքներին ընդգրկել նաև դպրոցի նյութական պատասխանատու անձանց և համապատասխան ակտերը հինգ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմ:

23.05.2025

X

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SARGSYAN KAREN 3710840503

Կ. ՍԱՐԳՍՅԱՆ
ք. Գավառ